# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵԵԿԿ-ԵՄԱՊՁԲ-26/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան　　　　　　　　　　　　　　　　　　　　　　24 հունիսի 2026թ.

2026 թվականի հունիսի 16-24-ին ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան 16 հասցեում գտնվող «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի շենքում տեղի ունեցավ մշտադիտարկման ենթակառուցվածքի ձեռքբերման ԵԵԿԿ-ԵՄԱՊՁԲ-26/11 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Դ. Ավանեսյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի փոխտնօրենը, |
| Ա. Ղուկասյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի ՏՏ ենթակառուցվածքի սպասարկման բաժնի պետը, |
| Ջ. Թովմասյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի հաշվապահը, |
| Ա. Դավթյանը՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի վարչատնտեսական բաժնի պետը: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Ավանեսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղարը՝ «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են չորս անդամ, բացակայում էր Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առանձին գործառույթների իրականացման խորհրդատու Տ. Արզումանյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
2. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և նախաորակավորման հայտարարությամբ սահմանված պայմաններին համապատասխանության մասին:
3. Ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և նախաորակավորված մասնակիցներ որոշելու մասին:

4. Նախաորակավորված մասնակիցներին բանակցությունների հրավիրելու մասին:

5. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հայտարարության տեքստում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026 թվականի հունիսի 16-ին, ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան 16 հասցեում գտնվող «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի շենքում ժամը 12:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1* | «Էֆ Նեթ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Զավարյան 57/4 | tenders@fnet.am | 00868357 |
| 2* | «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ ՀԳ | ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան փ., 1-ին նրբ., 13 շ., բն. 30<br>ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 194/3 | eychgroup@gmail.com<br>tender@dgcomp.am | 01254973<br>02247256 |
| 3* | «Լոկատոր» ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Ադոնցի 4/3 | tender@locator.am | 00095651 |
| 4 | «Իմպեքս» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 16, բն. 53 | info@impex.am | 00165322 |
| 5 | «ԱՅԱՅ ՍԵՔ» և «Ջի-Էս-Սի» ՍՊԸ ընկերությունների կոնսորցիում | ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի 28<br>ՀՀ, ք. Երևան, Աճեմյան 18, 44 շին. | iisecinfo@gmail.com<br>info@gsc.am | 04423755<br>02258906 |

**Հայտերը ներկայացվել են էլեկտրոնային փոստի միջոցով:* (*)

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի նախաորակավորման հայտարարությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված հայտերում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը Ընթացակարգի նախաորակավորման հայտարարությամբ սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի նախաորակավորման հայտարարությամբ պահանջված փաստաթղթերն առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

- «էՖ Նեթ» ՍՊԸ-ի կողմից, Ընթացակարգի նախաորակավորման հայտարարության 3-րդ կետով սահմանված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված «մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին համապատասխանությունը հիմնավորելու նպատակով ներկայացված Հավելված N 2-ում ներառված նմանատիպ պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը չի հավաստում, որ «էՖ Նեթ» ՍՊԸ-ն առնվազն մեկ պայմանագրի շրջանակում իրականացրել է նվազագույնը 100 տեսախցիկի տեղադրման, միացման և կենտրոնացված ծրագրային և/կամ սերվերային համակարգի հետ ինտեգրման աշխատանքներ:
- «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից, Ընթացակարգի նախաորակավորման հայտարարության 3-րդ կետով սահմանված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված «մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին համապատասխանությունը հիմնավորելու նպատակով ներկայացված Հավելված N 2-ում ներառված նմանատիպ պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը չի հավաստում, որ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն առնվազն մեկ պայմանագրի շրջանակում իրականացրել է նվազագույնը 100 տեսախցիկի տեղադրման, միացման և կենտրոնացված ծրագրային և/կամ սերվերային համակարգի հետ ինտեգրման աշխատանքներ:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով սույն արձանագրության 2-րդ կետով ներկայացված տեղեկատվությունը, 2026 թվականի հունիսի 22-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել Մասնակից/ներ/ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2026 թվականի հունիսի 24-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

2. «Էֆ Նեթ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026 թվականի հունիսի 24-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. «Էֆ Նեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ Ընթացակարգի նախաորակավորման հայտարարության 21-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, գնահատվել է անբավարար և մերժվել:

3. Հաստատել նախաորակավորված մասնակիցների ցուցակը՝ համաձայն ստորև բերվող աղյուսակի.

| N | Մասնակցի անվանում | **Նախաորակավորված մասնակից** /նախաորակավորված մասնակցի դեպքում նշել՝ «X»/ |
|---|---|---|
| 1 | «Էֆ Նեթ» ՍՊԸ | - |
| 2 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ ՀԳ | X |
| 3 | «Լոկատոր» ՓԲԸ | X |
| 4 | «Իմպեքս» ՍՊԸ | X |
| 5 | «ԱՅԱՅ ՍԵՔ» և «Ջի-Էս-Սի» ՍՊԸ ընկերությունների կոնսորցիում | X |

4. Որպես սույն նախաորակավորման Ընթացակարգի նախաորակավորված մասնակիցներ հայտարարել «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ ՀԳ-ին, «Լոկատոր» ՓԲԸ-ին, «Իմպեքս» ՍՊԸ-ին և «ԱՅԱՅ ՍԵՔ» և «Ջի-Էս-Սի» ՍՊԸ ընկերությունների կոնսորցիումին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով սահմանված պահանջները, գնման առարկայի բնութագրերը ճշգրիտ (օբյեկտիորեն) և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան սահմանելու նպատակով, 2026 թվականի հունիսի 24-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնարարել սույն նախաորակավորման Ընթացակարգի քարտուղարին՝ Կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, սույն արձանագրության հաստատման օրվան հաջորդող օրը՝ էլեկտրոնային եղանակով նախաորակավորված մասնակիցներին ծանուցելով հրավիրել բանակցությունների՝ ներկայացնելու համար իրենց կողմից առաջարկվող լուծումները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 5. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի նախաորակավորման հայտարարության տեքստում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը սահմանել համապատասխանաբար նախաորակավորված մասնակիցների հետ բանակցությունների վարման օրը և ժամին՝ 2026 թվականի հունիսի 30-ին, ժամը 11:00-ին «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի շենքում:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Դ. Ավանեսյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Ղուկասյան

Չ. Թովմասյան

Ա. Դավթյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան